



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

“ 11 ” հուլիսի 2012թ.

№ 54-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՄԵՂՐԻԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ - ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012թ. հուլիսի 9-ի <<Մեղրիի թիվ 2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և ընտրված տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N 95 -Ա որոշման, կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Ե Մ՝

1. 2012թ. հուլիսի 12-ից լուծել <<Մեղրիի թիվ 2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիկ Պողոսյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. 2012թ. հուլիսի 12-ից <<Մեղրիի թիվ 2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակել Մերի Հակոբյանին, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:


3. Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով

| | |
|---------------------|---|
| Կոզմանով Կառլեն | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ) |
| Այվազյան Վոլա | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ |
| Հարությունյան Գալյա | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ |
| Հակոբյան Մերի | <<Մեղրիի թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն (ընդունող) |
| Պողոսյան Լիլիկ | <<Մեղրիի թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ նախկին տնօրեն (հանձնող) |

4. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

5. << Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառնություններ իրականացումը:

<< ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ